

22.223



330.394
Գ-55
mm

Պրոլետարներ բոլոր երկրների միացի՛ր!
62

05 FEB 2007
ՀԱՅԿԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
7/XI - 1929
ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ՍՍՀՄ

Գ Ի Յ

ԳԻՒԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԴԵՊՈ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՄՍՈՒՆԱ

1003
14416

ՀԱՅԿԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ս. ՄԻՍԱԽՅԱՆԻ
Անվան
Գրական Բիբլիոթեկա

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
1919 թ.

I.

Շատ հին ժամանակներում մարդիկ կոմմունական
կամ համայնական կեանք են վարել. նոքա միասին են
տիրել իրենց բոլոր ունեցւածքին — հողերին, բնակա-
րաններին, ընտանի կենդանիներին և այլն: Այդ կեանքի
մնացորդները մինչև օրս էլ պահպանւել են, որպիսի է
գիւղական համայնքը: Հողատիրութեան համայնական
ձև. դա ժողովրդի գոյութեան կռիւ նախնական եղա-
նակն է. դորա պատճառներից մէկն է եղել մի կողմից
այն, որ Ռուսաստանը հարուստ է եղել աւազակներով
վիտացոյ անանցանելի անտառներով և «կտրին հրոսակ-
ներով» լի՝ անծայր տափաստաններով: Այդ ամենը, ա-
ռատ աղբիւրների սակաւութեան հետ մէկտեղ, ստիպել
է մարդկանց հնում միմեանց մօտ ապրել, սովորեցրել է
նոցա միասին աշխատել, նմանապէս միասին պաշտպան-
ւել և յարձակումներ գործել: Յետագայում ոռոս գիւ-
ղացու համակեցութեան և ընդարձակ տարածութիւն-
ները օգտագործելու համայնական սովորոյթներին աւե-
լանում են պետութիւնը, պետական զանձարանի պա-

Հանգնեցրի, որով գիւղացիք պարտաւորուած են այս կամ այն հարկը վճարել, գիւղական համայնքի ընդհանուր երաշխաւորութեամբ: Եւ այդ հանգամանքը վարժեցնում է գիւղացիներին իրար մէջ հաւասարապէս բաշխելու «պետական» բեռներն ու այն աղբիւրները, որոնցով կարելի է վճարել այդ հարկերը, այսինքն՝ մշակելի հողերը:

Ռուս գիւղացիք նախնական շրջանում հողագործութեան հետեւեալ սխտեմներն են բանեցնում. անտառների նկատմամբ նորա գործ են ածում տեղ բանալու, իսկ տափաստանների նկատմամբ՝ աղատ տեղ թողնելու սխտեմը: Անտառներում նորա կտրում, այրում են ծառերը և մոխրով պարարտացրած դաշտում երկու-երեք հուռնձ քաղելուց յետոյ՝ թողնում անցնում են ուրիշ տեղեր, իսկ տափաստաններում վարում են անմշակ (խամ) հողը, շարունակաբար մի քանի հուռնձ են քաղում և ապա անցնում են նոր վայրեր: Մարդկանց շատանալովը, ի հարկէ, աւելի և աւելի յաճախ են ստիպւած լինում վերադառնալու նախկին տեղերը, որոնք մի անգամ արդէն ենթարկւել են կուլտուրայի, բայց 3—2—1 տասնամեակների ընթացքում լաւ հանգիստ են առել: Այդ տեսակ հողերը տեղական զանազան անուններ են կրում՝ ձիշտն ասած, հողերի անսահման տարածութեան այս շրջանում երկրագործութեան ոչ մի սխտեմ չի եղել եղել է միայն թալան, որը սակայն, ամենեւին չի նւազեցրել հողի պտղաւէտութիւնը, որովհետեւ հողն աղատ մնալուն պէս՝ պտղաւէտութիւնը վերականգնել է: Այս տեսակ սխտեմների մնացորդները պահպանւել են Ռուսաստանի հիւսիսային նահանգներում, մասամբ նաեւ

հարաւ սրահեյեան երկրներում և Սիբիրի աւելի ընդարձակ մասերում:

Երկրագործութեան հետեւեալ շրջանը երկհերկ սխտեմն է, որը կախումն է ունեցել և հիմա էլ դեռ ևս կախումն ունի բոյսի տեսակէտից. մի մասում գարնանացանն է, իսկ միւսում՝ աշնանացանը, և այդպէս շարունակւում է տարեցտարի առանց հանգստի, բացի այն, որ հացի հետ մէկ տեղ հերթով փոխւում են նաեւ հողի տարածութիւնները: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ միատեսակութիւնից, վերջ ի վերջոյ 5—10—20—40 տարի յետոյ, նայելով պտղաբերութեան, հողն ուժասպառ է լինում և գորա առաջին նշանն այն է, որ հացաբոյսը խոտով է ծածկւում, և տարիներ են պատահում, երբ վերջինս բոլորովին խեղդում է հացը: Հողագործութեան այդ սխտեմը նկատելի է ամբողջ Թէրէկի, Դոնի և Կուբանի շրջաններում, նմանապէս թափառականների տափաստաններում և Սիբիրում:

Երբ հողի ուժասպառութիւնից առաջացած անբերութիւնն ու հացաբոյսերի խոտով ծածկուելու հանգամանքը դարձնում են երկրագործութիւնը ոչ միայն վնասակար առևտրական տեսակէտից, այլ չեն տղահովում նաեւ անտեսութեան սովորական պահանջները, այն ժամանակ հանդէս է գալիս երրորդ սխտեմը — եռահերկը, որը տարածւած է ամբողջ Ռուսաստանում, բացի Բալտիկեան ծովափնեայ շրջանից, ուր արդէն բազմահերկ սխտեմն է տիրում: Երկհերկ սխտեմից դէպի եռահերկ անցումը ներկայումս կարելի է նկատել, օրինակ, Կուբանի շրջանի զաղախների մէջ, մասամբ Դոնի և տեղ-տեղ Թէրէկի շրջաններում, նմանապէս նաեւ Սիբիրում:

Այդ սխտեմունւմ երրորդ մասը հանդիստ է թողնուում, որը կամ վարած դրուժեամբ է մնում և կամ որպէս արօտավայր՝ արածելու համար. երկու միջոցն էլ առաջացնում են հողի հանդիստ, ոչնչացնում են անպէտք խոտը և մասամբ պարարտացնում հողը: Այս ամենն այն աստիճան բարձրացնում է պտղաւէտութիւնն ու հացի որակը, որ ստիպում է նոյն իսկ ամենայամառ համայնքներն անգամ թողնելու երկհերկ սխտեմը: Պէտք է ասել, որ ընդհանրապէս դէպի եռահերկ սխտեմն անցնելու գործողութիւնը խիստ դանդաղ է կատարւում: 5—10 տարի է անցնում մինչև որ համայնքի անդամները համաձայնութեան են՝ զգալիս և համապատասխան պայման են կապում, ապա 2—3 տարի էլ անցնում է վարելահողը մասերի բաժանելու համար, որ հնարաւոր է հնձից յետոյ:

Սխտեմների յաջորդական փոխարինութիւնն առաջ է եկել ամբողջապէս տնտեսելու սովորութիւնից, հողի առատութիւնից և այն հանդամանքից, որ հողը՝ անդադար աճող բնակչութեան համեմատութեամբ սկսել է նւազել: Համեմատական նեղւածքը ստիպել է մարդկանց նախնական սխտեմներից (անտառների ծառերը կտրելով վարելահող բանալու և տափաստաններում ազատ տեղ թողնելու սխտեմներ) անցնել դէպի երկահերկը, իսկ յետագայ նեղւածքը՝ երկահերկից դէպի եռահերկը: Իսկ մեր ժամանակի նեղւածքը ստիպում է անցնել քառահերկ սխտեմի, որ բազմահերկի չափութէնն է կազմում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ սխտեմները բացարձակ (աբսոլյւտ) չեն եղել և չեն ոչ միշտ և ոչ էլ ամեն տեղ. օրինակ զօքա բացարձակ

(աբսոլյւտ) են կամ բացառաբար մեծամասնութիւն են կազմում ներքին Ռուսաստանում, մինչդեռ ծայրագլառներում միաժամանակ միեւնոյն համայնքներում կարելի է հանդիպել թէ նախնական (անտառներ կտրելու սխտեմ), թէ երկահերկ և թէ եռահերկ սխտեմների. այդ նկատւում է հիւսիսային նահանգներում, ուր վերջին տարիները միեւնոյն համայնքները մուտք է գործում չորրորդ հերկը արօտավայր դարձնելու սխտեմը, որը մեծ մասամբ ընդհանուր ցանքսափոխութեան մէջ չի մտնում, այլ գործադրւում է առանձին հողամասերում: Իսկ հարաւ արեւելեան երկրներում կարելի է միաժամանակ հանդիպել ազատ թողած հողի (перелог) երկհերկի, եռահերկի և տեղ-տեղ արօտավայրի, որպէս սկիզբն քառահերկի: Այդ ցոյց է տալիս, որ ծայրագլառներում սխտեմների էվոլյուցիան դեռ հեռու է իրականացումից:

Նեադհետէ նւազող հողերի խնայողութիւնից առաջ է զարիս ոչ միայն հողագործութեամբ սխտեմների փոփոխութիւն, այլ և փոփոխւում են համայնական հողերի օգտագործութեան ձևերը: Հողերն առատ եղած ժամանակ համայնքներն ընդհանուր առմամբ ամենեւին չեն հոգացել կանոնաւորելու հողի շահագործումը, նոցա ամբողջ կոնտրոլը եղել է միայն նսկողութիւնը, որ մի համայնքի հողը չանցնի ուրիշ համայնքի կամ վերջինիս անդամների ձեռքը, գոնէ մշտական օգտագործման համար: Այս շրջանում ամեն ոք ամեն տեղ ուղած քանակութեամբ կարող է օգտւել ազատ հողից, բայց փաստօրէն շահագործելու պայմանով և ոչ անունով միայն իւրը համարել: Նեադհետէ, ինչ չափով որ կարիք է

զգացուած «նոր հողերի» մշակութեան համար աւելի և աւելի հեռու ընկած հողեր զբաւելու՝ գիւղի մօտիկ հողերի արժէքն այնքան աւելի է բարձրանում, որովհետեւ բոլորի համար էլ աւելի հաճելի է, որ իրենց մասը ձեռքի տակ լինի. ուստի և մերձակայ մշակած հողերի նկատմամբ սկսում է գործադրել ընդհանուր վերաբաժանում և համայնքի կոնտրոլ, մանաւանդ որ այս հողերի համեմատ էլ, որպէս աւելի չափածների, հնարաւոր է դառնում աւելի հաւասարաչափ բաշխել պետական և հարկային ծանրութիւնները: Համայնքները սովորաբար բաժանում են հողերն ըստ մարդագլխի (արական) և ըստ շնչի (այսինքն ըստ արական և իգական անձանց), եթէ հողերը շահաւէտ են և լիովին ծածկում են ծախսերը, իսկ եթէ հողը չի ծածկում կամ հազիւ է ծածկում նշանակած պետական տուրքերը, այն դէպքում բաժանումը կատարւում է ըստ աշխատող ոյժի և ըստ հարկի (ТРАГГО): Հողային վերաբաժանումների ամբողջ իմաստն այն է, որ համայնական հողերի շահագործումից բաղաժարիքները հաւասար բաժանւին, միեւնոյն կերպ հաւասար բաժանւին նաեւ ծանրութիւնները, որպիսիք են՝ պետական, հողային, գիւղական — համայնական և այլ տուրքերը: Այդ պատճառով էլ համայնքները, քանի որ հողը բոլորին բաւականանում էր, խիստ գնահատում էին ընդհանուր վերաբաժանումները, որովհետեւ այդ վերաբաժանումների միջոցին ընտանիքների կազմը փոփոխութեան էր ենթարկւում յօդուտ մէկի և ի վնաս միւսի: Եւ որովհետեւ համայնքի հողերն անսահման չեն, ապա պարզ է, որ վաղ թէ ուշ համայնքի այս կամ այն մասը սակաւահող է դառնում, հետեւաբար ինչքան էլ

յաջող և ճշտապահ կերպով կատարւէին այդ վերաբաժանումները, այնուամենայնիւ նոյն համայնքների անդամների մեծամասնութեան համար դրա պէտք է լինէին սակաւահողութեան հաւասարութիւն: Եւ այդ հանգամանքը պատճառ է դառնում, որ յետագայում, քանի մեծանում է հողի նեղւածքը, համայնքների մէջ վերաբաժանումներն աւելի և աւելի հազադէպ են լինում և վերջապէս, իբրեւ մի անիմաստ բան, բոլորովին ընդհատւում են, քանի որ ինչքան էլ բաժանեն՝ վերջ ի վերջոյ, միեւնոյն է, ցաքանի պտտելու տեղ չի մնում: Վերաբաժանման սխտեմի մեռնելով Ռուսաստանում շատ համայնքների համար առաջ է գալիս մի նոր շրջան — շահագործումն կամ տիրապետումն ըստ ծուխի: Երբ խիստ տարածւած է արեւմուտքում և հարաւ արեւմուտքում Լիտովացիների, բելարուսների և մալարուսների միջ: Այս ձևի տիրապետումը կատարեալ մահ է համայնքի համար. բայց մարդիկ զեռ ևս տրադիցիայի հիման վրայ, ըստ սովորութեան շարունակում են տիրել հողին բաժան-բաժան ձևով, ուստի և տիրապետութիւնն ըստ ծուխի դուցէ տիրապետութեան ձևերից ամենավատն է, բայց, ի հարկէ, ոչ այն համայնական ձևի համեմատութեամբ, ուր վերաբաժանումները բոլորովին մեռնում են, որպէս մի անպէտք բան: Համայնական տիրապետութիւնն առանց վերաբաժանման գործողութեան և տիրապետութիւնն ըստ ծուխի, երկուսն էլ հաւասար, կերպով չափաւանց կտրատում, մաս-մաս և ցիր ու ցան են անում հողաշերտերը, որոնք առեւտրական տեսակէտից ոչ մի հաշիւ չկայ մշակելու, որովհետեւ խիստ շատ ժամանակ է կորչում մէկից միւսն

անցնելու համար և խիստ կորչում է երկրագործական որևէ կատարելութեան արժէքը: Իսկ եթէ գիւղացիք այնուամենայնիւ չեն թողել իրենց հողաշերտերը, դրա պատճառն այն է, որ նորա չեն ընկել շահի յետեւից, բաւականացել են ամենաչնչին աշխատավարձով: Բացի այդ՝ հէնց հոգեբանական տեսակէտից այնքան էլ հեշտ չէ անշատել թէկուզ սեպհականութեան և անկախութեան միբաժից յանձին այն փոքրիկ կտոր հողի, որի շուրջն են անցել գիւղացու մանկութիւնն ու պատանեկութիւնը, երբեմն իսկ նաև ամբողջ կեանքը:

Սյրպիսով ամեն ինչ իր ժամանակն ունի. իր ժամանակին համայնական տիրապետութիւնը վերաբաժանումներով հանդերձ օգտակար է եղել, որովհետև հողի լիութեամբ հաւասարեցրել է գիւղացիներին և որոշ սահմաններում աղքատացման (պրոլետարիզացիա) առաջն է առել. իր ժամանակին համայնական հողատիրութիւնն անօգուտ է դարձել, որովհետև հաւասարացրել է գիւղացիներին սակաւահողութեան նկատմամբ և, հետևաբար, խմբովին քայքայել նոցա, օրինակ, արևմտեան և միջին նահանգներում. իր ժամանակին վերաբաժանման գործողութիւնը համայնքների մէջ բոլորովին մեռնում է և համայնքները դիւրութեամբ հասնում են մինչև ծխախոտ հողատիրութեան ծեղին: Հողի շահագործման էվոլյուցիայի (զարգացման) այս բոլոր աստիճանները հիմա էլ կան Ռուսաստանում, նորա ընդարձակ տարածութիւնների զանազան մասերում, և հետաքրքիր նիւթ են մատակարարում ուսումնասիրելու և նկարագրելու համար՝ թէ խնայելը (экономика) ուրքան անողորմ կերպով է ազդում մարդկանց կենցաղի վրայ: Ծխախոտ հողատիրու-

թիւնը համայնականի մահն է, ուստի և անկման այն սահմանագիծն է, որից այն կողմը նոյն ուղղութեամբ անցնելու հնար չկայ:

Ո՞րն է հողի շահագործութեան յետագայ աստիճանը: Մինչև պատերազմն ու յեղափոխութիւնը կարելի էր կարծել, որ համայնքը կկազմէ իւր հակապատկերը — ագարակ (хутор) կգառնայ, ինչպէս որ Սրեմոուտքումն է. ի հարկէ այդ չպէտք է հասկանալ շաբլոնական — հասարակ ծեղով, թէ բոլոր համայնքներն անպատճառ պէտք է ագարակի վերածւէին, որովհետև այդպէս պընդել՝ կնշանակի ժխտել իրականութիւնը, ուր տեսնում ենք, որ ուրու գիւղացոց համայնքները իւրացնում են կօօպերատիւներ, քառահերկ սիստեմներ և այլ կատարելութիւններ, ապա ուրեմն ինչու պէտք է բոլորն էլ ագարակի վերածւին: Ագարակներն կարող էին պէտք զալ ո՛չ թէ մարքսիստական տրիւղիայի (թէզիս, հակաթէզիս, սինտէզ) իրականացման համար, այլ համայնքն տեղաշարժ անելու համար այն մեռած դրութիւնից, ուր անողորմ կերպով բերել հասցրել է նորան խնայողութեան (էկոնոմիկա) էվոլյուցիան:

Ագարակը (хутор) երկրագործութեան բարւոքման տեսակէտից համայնականի հետ համեմատաժպրոգրէսիւ երևոյթ է, որովհետև ագարակային տնտեսութիւնը կօօպերացիայի համապատասխան զարգացմամբ հնարաւորութիւն է տալիս գործ տուաչ տանել զիտական եղանակով և գործադրել համարեա բոլոր մէթոյներն ու արդիւնարբերութեան գործիքները, ինչ որ գործադրւում է նաև խոշոր տնտեսութեանց մէջ: Ագարակատէրն ազատ է կառավարելու, ինչպես որ լաւ է համարում. մինչդեռ

ներն աղքատանան: Դորա պատճառն այն չէ միայն, որ բոլոր մարդիկ հաւասար ոյժ, խելք, ջանասիրութիւն և այլ ընդունակութիւններ չունին, և ոչ էլ միայն այն, որ գիւղական ընտանիքների կազմն է տարբեր տղամարդկանց, կանանց, երեխաների և այլն նկատմամբ, այլ նաև այն, որ գիւղացիք բոլոր մարդկանց պէս տարբեր պայմանների մէջ են գտնուում, թէկուզ քաղաքների, կայարանների, նաւահանգիստների և այլն հեռավորութեան նկատմամբ և կամ այն հողի պտղաւէտութեան նկատմամբ, որի վրայ աշխատում են: Այս բոլոր պայմաններից առաջանում է այն, որ ոմանք հարստանում են, իսկ միւսները սնանկանում, որովհետև հացի և ապրանքի գները հաւասար են բոլորի համար. այնպէս որ միևնույն արժէքի պայմաններում ոմանք յաւելւած են ստանում, իսկ միւսների մէջ պակասութիւն է ստեղծւում: Ինչքան էլ հաւասար բաժանւի հողը՝ կենցաղական պայմանների տարբերութիւնը վերանալ չի կարող, ուստի և, մինչև որ չ'անհետանայ անհատական տնտեսութիւնը, մինչև որ գիւղացիք չ'ազդարեն իւրաքանչիւրն առանձին տնտեսութիւն վարելուց, փոքրամասնութիւնը կստանայ, իսկ մեծամասնութիւնը կ'աղքատանայ, նոյն իսկ հողի համայնացման (սոցիալիզացիա) և ազգայնացման (նացիոնալիզացիա) պայմաններում:

Ենթադրենք, որ հողը ոչ միայն աղգային սեպհականութիւն է յայտարարւած, այլ նաև հաւասարապէս բաժանւած է գիւղացիների մէջ. բայց այդ դեռ ևս չի նշանակում, որ որոշ բաժին ստացողները բոլորն էլ կարող են ամբողջ հողը մշակել. երբէք, մասաւանդ մեր ժամանակում: Համաշխարհային պատերազմը ստեղծել է

շնչաւոր և անշունչ գոյքի, այսինքն՝ տաւարի և գիւղատնտեսական գործիքների այնպիսի անագին պակասութիւն, որ ոչ մի կառավարութիւն այդ բանում չի կարող էական օգնութիւն հասցնել գիւղացիներին: Բացի այդ, չքաւոր գիւղացիութեան սերմացու է հարկաւոր, որովհետև նորա ցորենը սովորաբար չի բաւականանում նոյն իսկ ապրուստի համար: Այդպիսով՝ ամենաարդար չափով հողաբաժին ստանալը դեռ կէս զործ էլ չէ, որովհետև միայն հողը չի կարող կերակրել, քանի որ պակասում է այդ հողը վարելու գործիքն և ցանկելու սերմը: Պարզ է, որ այս կամ այն պատճառով հողը մշակելու կարողութիւն չունեցող գիւղացիների հողաբաժինները պէտք է կիտւեն աւելի զօրեղ հարեանների ձեռքում, որոնք աւելի ևս կ'հարստանան, իսկ առաջիններն աւելի կ'աղքատանան: Միայն հողի անցումը գիւղացիների ձեռքը, նոյն իսկ առանց փրկագնի, դեռ ևս կարող չէ բարւոքել չքաւոր գիւղացիութեան մեծամասնութեան զրութիւնը: Իսկ եթէ փրկագին ևս նշանակւած չինէր, այն դէպքում գիւղացիների համար միայն հորտութիւն կ'ստեղծւէր:

Թէ ինչ է իսկապէս հարկաւոր չքաւոր գիւղացիութեան վիճակը բարւոքելու համար, այդ թելադրեց ինքը կեանքը: Ամենից առաջ տեղական Խորհուրդները, ապա հողային՝ երբեմն էլ պարենաւորման կոմիտէտները և նոյն իսկ կօօպերատիւները ստիպւած էին իրենց վրայ վերցնել բոլոր զրաււած կաւածքների կառավարութեան գործը — չքաւորների երբեմն էլ գիւղական կոմմունաների վարձովի աշխատանքով մշակելու համար: Այդ ամենն անկու ստիպում է գիւղացոց մէջ սոշտտա-

ւոր ձեռքերի, տաւարի, երկրագործական գործիքների, սերմի, պարարտացման միջոցների և փողի պակասութիւնը: Այս բոլորը մատակարարելու գիւղական առանձին ընտանիքներին, ի հարկէ, ոչ մի հնարաւորութիւն չկար, մինչդեռ կալւածքների մեծամասնութիւնն ունէր արդէն պատրաստի գոյք: Իսկ շատ դէպքերումն էլ Խորհուրդներն ու կոմիտէները հոգացել են կալւածքների բոլոր անհրաժեշտ իրեղէնները, դրամը հետը հաշւած, այնպէս որ դա աւելի հեշտ էր քան առանձին գիւղացիներին օգնելու գործը: Հոռնծից յետոյ կերակայ, թէ ինչքան գործ է արւած տեղերում այդ ուղղութեամբ. բայց որքան էլ մեծ լինի կատարւած գործը, ամուսնամենայնիւ այդ դեռ ևս բաւական չէ չքաւորներին կարիքից փրկելու և զիւղում սոցիալիստական կարգ հաստատելու համար:

Վերջ ի վերջոյ քաղաքներից դուրս կամ գիւղական շրջաններում կեանքն այնպէս պէտք է վերաշինւի, որ ամեն մի գիւղ լինի մի անբաժան տնտեսութիւն կամ, աւելի լաւն ասած, մի վիճակային տնտեսութեան բաժանմունք: Այս պայմաններում միայն կարելի կլինի հասնել այն դրութեան, որ զիւղերում չլինի ոչ աղքատ և ոչ հարուստ, այլ իւրաքանչիւրն ունենայ կարողայ այն ինչ որ հարեալն ունի: Այդ դրութեան հասնել անկարելի է միանգամից, և դրանում շահագորգուած լինել չեն կարող ներկայումս մեծ ու փոքր գիւղերում ապրող բոլոր բնակիչները:

Գիւղական վայրերում ապրող բոլոր բնակիչներին կարելի է բաժանել երեք անհաւասար խմբերի — հարուստ, աղքատ և միջակ կարողութեամբ:

Առաջինները, ինչպէս և ամեն տեղ, ամենից բիչ են. դժբա սովորաբար հարուստ գիւղացիներն են, առւտրականները, խանութպանները, չաղաց ունեցողները և այլն. նոցա սովորաբար վաշխառու անունն են տալիս, եթէ նոքա, բացի այդ ամենից, վաշխառութեամբ են պարապում, օրինակ, դրամի, ցորենի փոխառութեամբ, և այդպիսով ստրկացնում են շրջակայ ամբողջ բնակչութիւնը:

Ռուսաստանի նահանգների մեծամասնութեան մէջ գիւղերում ամենից շատ չքաւորներն են, դժբա են զուտ պրոլէտարները, մշակները, որոնք ոչ մի տնտեսութիւն չունին, և կիսապրոլէտարները, որոնք թէև ունին տրնտեսութիւն, բայց այդ տնտեսութիւնը նոցա չի բաւականացնում և ստիպում է դիմելու կողմնակի աշխատանքների իրենց տեղում, քաղաքներում և այլն:

Բացի չունեւորներից և հարուստներից կայ նաև միջակ կամ «աշխատաւոր» գիւղացիութիւն, որն ապրում և կերակրում է իր տնտեսութեամբ, մասամբ առանց վարձովի աշխատանքի, մասամբ էլ ժանր աշխատանքի միջոցին բանւորներ ու բանւորուհիներ վարձելով — օրավարձով կամ որոշ ժամանակով: Մի քանի ծայրանահանգներում, օրինակ, Վարոնէժի, Սարատովի նահանգներում, զաղախների վիճակներում, Սիբիրում այդ տեսակ միջակ կարողութեան տէր գիւղացիները գիւղական բնակչութեան մեծամասնութիւնն են կազմում:

Հարուստ գիւղացիք յեղափոխութիւնէն առաջ էլ ունէին առատ հող, փող և այլ հարստութիւն, այնպէս որ յեղափոխութիւնը նոցա ոչինչ չտւեց, մանաւանդ որ



ցարիզմի ժամանակ էլ նոցա չեն ձնշել ո՛չ զաւառապետներ, ո՛չ ստրաժնիկներ և ո՛չ էլ հարկեր. շատ բաներում յեղափոխութիւնը նոյն իսկ վնասեց նոցա, որովհետեւ հոգային կոմիտէաները իրաւունք ունէին խլել նոցանից սահմանաժամ չափից աւելի հողը, իսկ տեղական խորհուրդները, բացի այդ, կարող էրն խանդարել նոցա հացի և այլ մթերքների ու ապրանքների սպէկուլեացիայով պարապելու:

Միշակ կարողութեան տէր զիւղացիք շահւած են յեղափոխութիւնից և մանաւանդ կոմմունիստների առաջացրած հոկտեմբերեան յեղափոխութիւնից, որովհետեւ յեղափոխութիւնը տւեց նոցա հող և ազատութիւն, ազատեց չինովնիկների և ոստիկանութեան կամայական խուլութիւնից, նմանապէս «բռնի հարկապահանջից», իսկ նուլթիւնից, նմանապէս «բռնի հարկապահանջից», իսկ որ գլխաւորն է՝ ազատեց նոցա պատերազմելու անհրաժեշտութիւնից՝ բանկիրների, դրամատէրերի և կալւածատէրերի շահերի համար: Այս կարգի զիւղացին հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ միայն կատարեալ հնաւորութիւն ստացաւ աղաա աշխատելու ժողովրդական կամ ազգայնացրած (национализованный) հողի վրայ:

Չբաւոր զիւղացիութիւնը յանձին պրոլետարների և կիսապրոլետարների յեղափոխութիւնից ընդհանուր առմամբ ստացաւ նոյնը, ինչ որ նաեւ միջնակարգ զիւղացիք, բայց չբաւորները իրենց ստացածից աւելի քիչ չափով կարողացան օգտուել բան միջնակարգ զիւղացիները: Դորա պատճառն այն է, որ նոքա կամ ամենեւին զուրկ են եղել շնչաւոր և անշունչ գոյքից (տաւարից և զործիքներից), սերմից ու փողից և կամ աւելի քիչ չա-

փով են ունեցել՝ քան «միջնակները»: Այդ է պատճառը, որ չբաւորները յեղափոխութիւնից յետոյ էլ մեծ մասամբ ստիպւած են «երկրպագութիւն անել» վաշխառուների և այլ հարուստների հանդէպ մեծ ու փոքր զիւղերում: Ի հարկէ դորան պէտք է վերջ տրւի:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը հնարաւորութիւն է տւել քաղաքի բանւորներին բանկերի, խոշոր արդիւնաբերութեան, ճանապարհների և առուտուրի նաղիոնալիզացիայի (յայտարարումն իբրեւ պետական տեղահանութիւն) միջոցով, իրենց ձեռքն առնելու քաղաքների ամենաաղյխաւոր տնտեսութիւնը: Միւսնոյն պէտք է անեն նաեւ չբաւորները զիւղերում, այսինքն՝ պէտք է դառնան կեանքի տէրը: Յեղափոխութիւնից առաջ քաղաքներում քաղաքային կեանքն ամբողջապէս իրենց ձեռքն էին առել բանկիրները, դրամատէրերն ու կալւածատէրերը, որոնք կատարելապէս իշխում էին բոլոր չբաւորների վրայ: Գիւղերում ևս յեղափոխութիւնից առաջ բոլոր չբաւորներին իրենց ձեռքն էին առել միւսնոյն կալւածատէրերը, վաշխառուները, չարչիներն և այլ վաշխառուները:

Չբաւորների հանրապետութեան մէջ, որպիսին Ռուսաստանն է այն օրից ի վեր, երբ խորհուրդներն իրենց ձեռքը ձգեցին իշխանութիւնը, ոչ մի նման երևոյթ ալ ևս չպէտք է տեղի ունենայ. բայց այդ չի կարելի մի անգամից իրադործել: Բացի այդ զիւղերում իրադործելը աւելի դժւար է քան քաղաքներում, այնտեղ տիրող խաւարի և անդրազիտութեան պատճառով:

Գիւղերում արդարացի կեանք ստեղծելու գործին պէտք է ձեռնարկեն իրենք չբաւորները, որովհետեւ ար-

դարութեան խնդրում ամենից աւելի նոքա են շահագրգռւած: Հարուստներն, ընդհակառակը, ամեն տեղ շահագրգռւած են անարդարութեամբ, որ քերն ազատ ու փարթամ կեանք վայելեն, իսկ մեծամասնութիւնը գոհ լինի իր վիճակից, որ աւելի վատթար դրութեան մէջ է (ի հարկէ ոչ աղքատներն՝ այլ հարուստների համար): Գիւղերում արդարացի կեանք վերաստեղծելու համար չքաւորները պէտք է ամենից առաջ միանան իրար հետ և կազմեն «չքաւորների կոմիտէներ»:

Քաղաքներում պրոլետարներն իրենց շահերը պաշտպանելու համար միացել՝ պրոֆէսսիօնալ միութիւններ են կազմել, իսկ գիւղերում պրոլետարներն ու կիսապրոլետարները ամենից հեշտ կարող են միանալ և կոմիտէներ կազմել: Այդ միութիւնը հնարաւորութիւն կտայ նոցա պաշտպանելու իրենց շահերը վաշխառուների ամեն տեսակ բռնութեանց դէմ և ստեղծելու նոր արդարացի կեանք: Չքաւորների կոմիտէները, օրինակ, կարող են իրենց ձեռքն առնել հողի, անտառի, հարկերի, ապրանքների, գործիքների, սերմերի, մթերքների բաշխումը կարող են նմանապէս իրենց ձեռքն առնել տեղական կօօպէրատիւները, հացի մենաւաճառն ու բանւորական գիւղացիական կառավարութեան զանազան դեկրետներն իրականացնելու գործերը: Բացի այդ, չքաւորների կոմիտէները պէտք է հոգ տանեն, որ տեղական կոմիտէների մէջ չ'անցնեն վաշխառուներ և այլ հարուստներ, այլ անդամ լինին միայն չքաւոր ու միջնակարգ գիւղացիք, որովհետև հակառակ դէպքում չքաւորների կենտրոնական կառավարութեան ոչ մի օրէնքը չի կատարւի:

Կոմիտէները խիստ շատ գործ ունին կատարելու,

որովհետև նոքա պէտք է ընդգրկեն տեղական ամբողջ կեանքը. բայց նոցա ամենադժխաւոր աշխատանքը պէտք է լինի կոմմունաներ կազմելու գործը, նոքա պէտք է աշխատեն գիւղական անշատ տնտեսութիւնները մի ամբողջութեան վերածել տարբեր գիւղերի և վիճակների շրջաններում: Այդ ամենի մէջ շահագրգռւած են ներկայումս միայն չունեւորները, բայց որքան յաջող ընթանայ չքաւորների կոմիտէների և գիւղական կոմմունաների աշխատանքը, այնքան աւելի կմիանան նոցա և և միջնակարգ գիւղացիք: Վերջինները մեծ կարողութիւն չունին, այնպէս որ նոցանից շատերը, նոյն իսկ առատ տարիներում, հնձից յետոյ կամ ծմրանը կողմնակի որևէ աշխատանքով են զբաղւում: Միջնակարգ գիւղացիք, օրինակ, խիստ շահագրգռւած են, որ քաղաքի ապրանքները հաւասար բաշխեն, և քանի որ այդ գործը չքաւորների կոմիտէների ձեռքում պէտք է լինի, ապա պարզ է, որ միջնակարգ գիւղացիների համար ձեռնառու է միանալ չքաւորներին և ոչ վաշխառուներին, որոնք շահ են փնտրում այն ամենի մէջ՝ ինչ որ կարելի է գնել ու վաճառել:

Արդարացի կեանքը կարելի է ստեղծել նիայն ընդհանուր ուժերով. և եթէ չքաւորներն իրար հետ միանան՝ հարուստները ճարահատեալ ստիպւած կլինին իրենց կարողութիւնը «ընդհանուր կաթսայի» մէջ խառնել:

III.

Կար ժամանակ, երբ մարդիկ կոմմունական կեանք են վարել, այսինքն՝ միևնոյն ցեղի կամ տոհմի բոլոր անդամները ապրել ու աշխատել են համայնական տնե-

բում և համայնական հողի վրայ, ոչ մի բան չունենալով որպէս անձնական սեպհականութիւն: Իրենց պարզ կեանքի բոլոր միջոցները, լինի այդ որսորդութիւն, անասնապահութիւն կամ երկրագործութիւն, միեւնոյն է, նոքա միասին էին ձեռք բերում, և ընդհանուր աշխատանքով ձեռք բերածը բաժանում էին իրար մէջ համայն իրենց կարիքի և նայելով՝ թէ իւրաքանչիւրին որքան կհասնի: Այդ ժամանակի մարդկանց տիրապետութեան և ձեռքի տակ եղածը, օրինակ, որսը կամ ձուկը, հօտն ու նախիրը, հացահատիկների բերքը, անտառները, արօտավայրերն ու վարելահողերը, բնակարաններն և այլն համարել են ընդհանուր սեպհականութիւն: Այն ժամանակ մարդիկ չգիտէին, թէ ինչ բան է «իմն ու քոնը», այլ գիտէին «մերն ու ձերը»:

Մեզ աւելի մօտիկ ժամանակներում այդպէս էին ապրում, օրինակ, ճախնի քրիստոնէաները, մանաւանդ հալածանքների շրջանում: Նոքա ևս անձնական ոչ մի սեպհականութիւն չեն ունեցել և իրենց ունեցածին միասին են տիրել. նմանապէս աշխատել են միայն իրենց համայնքների կամ կոմմունաների համար և ոչ թէ իրենց անձնական շահերի համար, ինչպէս որ թէկուզ մեր ժամանակն է: Այժմ ճիշտ միեւնոյն կերպ են ապրում «գուխօրոր» կոչւած աղանդաւորները, որոնք զեռ Պապեդոնոսցեի ժամանակ ստիպւած էին թողնել Ռուսաստանն և փոխադրւել Ամերիկա: Նոքա, նախկին քրիստոնեաների պէս, մասնաւոր սեպհականութիւնը մեղք են համարում և կոմմունաներով կամ համայնքներով են ապրում, միասին են տիրում իրենց բոլոր ունեցածին, այսինքն՝ հողին, տաւարին, գործիքներին, տներին, հացի

ու կանաչեղէնի բերքին, նմանապէս բոլոր այն ապրանքներին, որոնք ձեռք են բերում փոխելով իրենց անտեսութեան արդիւնքների հետ և պահում իրենց ընդարձակ շտեմարաններում. ընդհանուր տէր են նաև փողի, որը պահւում է կոմմունական զանձարկղի մէջ:

Վերցնենք մի զիւղ, որն ունի թէկուզ 50 տանտէր կամ ծուխ: Այդ նշանակում է, որ նոյն զիւղում կայ 50 աղարակ, 50 տուն, 50 շտեմարան, դոմ կամ արօտ տաւարի համար, նոյնքան էլ ձի, կով, սալլ, գութան, նկուղ, բաղնիք, նոյնքան էլ խոհանոց և խոհանոցներում նոյնքան էլ կին: Մի խօսքով ամեն ինչից չխուսնում նոյնքան էլ կին: Մի խօսքով ամեն հակառակ դէպքում անկարելի է փոքր ինչ տանելի տնտեսութիւն վարել հողի վրայ: Այդ ամենը սովորական բան է համարւում, որովհետեւ հարիւրաւոր տարիների ընթացքում ամբողջ աշխարհում մարդկային կեանքը վարժւել—սովորել է դորան, մինչդեռ այդ ամենը մեծ շռայլութիւն է ու խիստ անձեռնտու:

Եթէ իբրև օրինակ վերցրած 50 տանտէրը գուխօրորներ լինէին կամ ժամանակակից հաստատ համոզւած կոմմունիստներ, նոքա 40 բակի և տան փոխարէն հաւանօրէն կբաւականային 5 կամ 10 տնով: Դորանով ի հարկէ կստացւէր հողի և շէնքերի մեծ խնայողութիւն. խնայած կլինէին նմանապէս բնակարանների և այլ շէնքերի կառավարութեան ու ներդրութեան համար պէտք եղած աշխատանքը: Բացի այդ, նոցա բաւական կլինէր մէկ կամ երկու շտեմարան ցորենի համար, երկու-երեք նկուղ, մէկ բաղնիք, մէկ կամ երկու շէնք տաւարի համար, համապատասխան թւով նաև այլ յարմար

ըութիւններ: Կանանց զործն էլ կթեթեանար. 50-ի փոխարէն միայն 5—10 խոհանոցի հետ զործ կունենային: Բայց խնայողութիւնը դորանով միայն չէր սահմանափակւի. 50 տանտիրոջ ունեցած հողի մշակութեան համար 50 զութանի փոխարէն կարելի կլինէր բաւականաւ 20—30 հատով և կամ մէկ շոգեգութանով և կամ, աւելի լաւ, մէկ տրակտոր (զործիք, որով կարելի է վարել, ցանել, հնձել, հերկել, կալսել) ունենալով: Շոգեգութան և տրակտորը աշխատանքի մեծ խնայողութիւն են տալիս. բայց դրանք զործածել կարելի է միայն մեծ տնտեսութեանց համար և ոչ թէ գիւղական մանր մարդազուլս բաշխած հողաբաժինների համար: Հետեւաբար մեր օրինակում բերած 50 տանտէրը կարող կլինէին շոգեգութան, տրակտոր և կալսելու շոգեմեքենայ բանեցնել այն դէպքում միայն, եթէ գոլխաբորների պէս իրենց անշատ հողամասերը «մի ընդհանուր սահմանազծի մէջ առնէին», այսինքն՝ եթէ 50 փոքրիկ տնտեսութիւններից կազմէին մի մեծ տնտեսութիւն:

Մեր գիւղերում խիստ շատ ճող է կորչում տների, ճանապարհների և սահմանազծերի համար. և որքան փոքր է տնտեսութիւնը՝ այնքան աւելի է հող կորչում: Հետեւաբար քանի խոշոր լինի տնտեսութիւնը՝ այնքան աւելի կարելի է ունենալ հողի, նորա մշակութեան և գիւղատնտեսական զործիքների ու տաւարի խնայողութիւն: Եթէ, օրինակ, 50 տանտէրից իւրաքանչիւրն ունի 10 դեսետին հող, ապա ամեն մի ձի, ցաքան և այլ զործիք կարող է աշխատել միայն 10 դեսետին հողի վրայ. իսկ եթէ 50 տանտէր միասին վարեն տնտեսութիւնը՝ այն դէպքում 50-ի փոխարէն բաւական

կլինէին 20—30 զութան, ցաքան և այլ զործիքներ և հետեւաբար աճեն մի ձիուն և զործիքին բաժին կ'ընկնէր 10 դեսետինի փոխարէն 15—20 դեսետին:

Այս դեռ ևս նորութիւն է գիւղի համար, բայց դա պէտք է լինի և չի կարող չլինել: Կար ժամանակ երբ գիւղը չգիտէր թէ ինչ բան է զութանը, կալսելու և հնձելու մեքենաները, ինչ է արհեստական պարարտացումն և այլ նորմութիւններ, իսկ այժմ համարեա ամեն մի գիւղ ունի զութան, թեղը քամելու, կալսելու մեքենաներ և այլ զործիքներ: Կար ժամանակ, երբ քաղաքն ու գիւղը քիչ էին տարբերում իրարից իրանց տներով. քաղաքի տները նոյնպէս փոքր էին՝ ինչպէս և գիւղերին: Իսկ այժմ. պալատներ են, որոնց ամման պատճառը, ամենից առաջ, քաղաքների բազմամարդութիւնն է ու հողի թանկութիւնը: Նոյնը այժմ գիւղերումն է. քանի գնում զգալի է դառնում նեղածը, այնպէս որ կամայ ակամայ պէտք կլինի հողի և աշխատանքի խնայողութիւն անել: Դորա միակ ճանապարհը—պէտք է մեծ շէնքեր կառուցանել, որպէսզի մի քանի ընտանիքներ միասին ապրեն, ինչպէս որ քաղաքներումն է, և զործադրել կատարելագործած զործիքներ, որի համար պէտք է խոշոր տնտեսութիւններ կազմակերպել: Այս խոշոր տնտեսութիւնները կարող են կազմակերպել կամ ստեղծել մի կողմից տեղական խորհուրդներն ու հողային կոմիտէները՝ նախկին կալաճատերերի, հողատէրերի և այլոր օրինակելի կազմակերպութիւն ունեցող տնտեսութիւններից. իսկ միւս կողմից՝ ինքը տեղական բնակչութիւնը, մանր տնտեսութիւնները խոշորի վերածելով, օրինակ, կոմսոնիստական տնտեսութիւններ,

միութիւններ կամ ընկերութիւններ կազմելով: Նէնց այս գործն է, ուր ամենազլխաւոր դերը կարող են կատարել չքաւորներն կոմիտէները, որովհետեւ այս ստեղծագործութեան մէջ նոքա են շահագրգռւած և ոչ հարուստներ:

Գիւղատնտեսութիւնը մատակարարում է բացարժակապէս հում նիւթեր, որոնք կարիք ունին յետագայ վերամշակութեան. օրինակ, ցորենը պէտք է աղալ և հաց թխել, կանաչեղէնն ու պտուղները կարելի է չորացնել, եփել, թթու դնել, նոցանից կոնսերվ պատրաստել. միւսը նոյնպէս կարելի է եփել, չորացնել, ապուխտ, կոնսերվ պատրաստել և այլն: Մի խօսքով գիւղատնտեսական նիւթերը սովորաբար վաճառւում են կիսապատրաստ դրութեամբ, իսկ այդ պակաս շահուէտ է թէ՛ դիւղացիների և թէ՛ սպառողների համար, քան եթէ այդ ամենը վաճառւէր բոլորովին պատրաստ կամ գոնէ սովորականից աւելի պատրաստ դրութեամբ: Անշուշտ շահաւէտութիւնն ամենից առաջ նրանումն է, որ հում ու կիսահում նիւթերի փոխադրութիւնը մեծածաւալ լինելու պատճառով աւելի թանկ է նստում. և այդ թանկ փոխադրութեան ծախքերն, ի հարկէ, թանկացնում են նիւթերը և տուժողը միայն սպառողն է լինում: Երկրորդ՝ նիւթերը վերամշակողն ևս ինչքան չլինի մի բան շահւում է ի հաշիւ աշխատողների և սպառողների: Դորանից առաջ է զալիս այն, որ բաւականին կորուստ են ունենում թէ՛ արդիւնաբերողները՝ զիւղատնտեսները, թէ՛ սպառողները — նոքա, որոնք զնւում են այն ամենը, ինչ որ գիւղը մատակարարում է քաղաքին:

Այս դրութիւնից խուսափելու համար մի ելք կայ. այն է՝ պէտք է ամեն ինչ տեղումը վերամշակել և բոլորովին պատրաստ քաղաք հասցնել: Այդ ամենը հնարաւոր է ոչ միայն քաղաքի մօտ գտնւող տնտեսութեանց համար, այլ և հեռու ընկածների համար, քանի որ կան երկաթուղիներ, շոգենաւեր և ապրանքատար աւտոմոբիլների հաղորդակցութիւն: Ի հարկէ դա անկարելի և քիչ շահաւէտ է փոքր տնտեսութեանց և առանձին՝ ոչ մեծ գիւղերի համար. բայց միանգամայն անհրաժեշտ է այն ընդարձակ տնտեսութիւնների համար, որոնք կարող են և պարտաւոր են ստեղծել չքաւորների կոմունաները չունեւորների կոմիտէների, խորհուրդների (գիւղական և վիճակային) հետ միասին, նմանապէս հողային կոմիտէների, պարենաւորման կազմակերպութիւնների հետ, մի խօսքով տեղական խորհուրդների բոլոր բաժանմունքների հետ մէկ տեղ:

Ենթադրենք, որ կոմունան տնտեսութիւն է վարում 2—3 հազար դեսետին տտրածութեամբ հողի վրայ. այսպիսի ընդարձակ տնտեսութեան դէպքում, եթէ կան նաեւ համապատասխան հողագործական տեխնիկական ոչժեր, դիւղական մասնադէտներ, բացի երկրագործութիւնից, բանջարեղէնի մշակութիւնից և այգեգործութիւնից, կարելի է զբաղւել նաեւ անասնապահութեամբ, թռչնաբուծութեամբ և կաթնատնտեսութեամբ: Յիշեալ տնտեսութիւնից որպէսզի կարելի լինի ըստ կարելւոյն մեծ օգուտ քաղել թէ՛ արդիւնաբերողների և թէ՛ սպառողների համար, այսինքն՝ թէ՛ տնտեսութեան մէջ աշխատողների և թէ՛ պատրաստի նիւթերը զնոցների համար, ամենից լաւն է, որ բոլոր նիւթերը իրենց

տեղում վերամշակին և տնտեսութիւնից զործածութեան յանձնին միայն պատրաստի ձևով: Դորա համար՝ հում նիւթը վերամշակելու նպատակով՝ տնտեսութիւնը պէտք է ունենայ, օրինակ, սեպհական ջաղաց, փուռ, կոնսերվի գործարան, կանաչեղէնն ու պտուղները չորացնելու տեղ, կոլբասի, պանրի, շաքարեղէնի և մակարոնի գործարաններ և այլ յարմարութիւններ: Տնտեսութեան այսպիսի կազմակերպութեան օգուտը կլինի այն, որ կարիք չի լինի թանկ գնով փոխադրել ոչ ցորենը, ոչ խոտը, ոչ միսը, ոչ թռչունները, ոչ կաթնեղէն և այլ հում նիւթերը: Դոցա փոխարէն կարելի է քաղաք փոխադրել — հաց, պակսիմատ կամ բիսկվիտ, կանաչեղէն, մրգեղէն, մսեղէն և կաթնեղէն կոնսերվներ, պանիր, թանձրացրած կաթ, մակարոն, կոլպաս, չորացրած սուպ, բորչչ, ապուր, միրգ և կանաչի, շաքարեղէն, շաքարահաց և այլն: Այս բոլորի փոխադրութիւնն աւելի յարմար է ու էժան, քան հում նիւթերի փոխադրութիւնը. նմանապէս աւելի յարմար ու ձեռնտու է նոցա պահպանութիւն տեղի և չփչանալու տեսակէտից:

Բայց շահաւետութիւնը դրանով միայն չի վերջանում: Գիւղատնտեսական հում նիւթերի պատրաստութիւնը կամ մշակումը կարիք պէտք է զգայ որևէ մեքենաշարժ ուժի, օրինակ, ջրի, գոլորշու, էլէքտրականութեան. միևնույն մեքենաշարժ ուժերը պէտք են նաեւ հողը մշակելու համար, օրինակ, ոռոգելու կամ ջրելու համար, հողը պարարտացնելու կամ բոյսերի աճումն արագացնելու համար (էլէքտրականութիւն), կալսելու գործիքները, գութանն ու տրակտորները և այլն բանեցնելու համար, նմանապէս էլէքտրական լուսաւորութեան

և գիշերային աշխատանքների համար, փոխադրութեան համար և այլն: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ երբ միևնույն մեքենաշարժ ուժերը (ջուրը, գոլորշին և էլէքտրականութիւնը) միաժամանակ զործադրում են թէ՛ հողը մշակելու և թէ՛ նիւթերը վերամշակելու համար, այդ դէպքում նոցանից աւելի մեծ չափով է օգուտ ստացւում, քան եթէ զործադրում են կամ միայն հողագործութեան, կամ միայն ինդուստրիայի (ֆաբրիկաների և գործարանների) համար, և այս դէպքում ամեն մի ապրանք աւելի էժան է նստում:


Բուրժուական կարգի ժամանակ ամեն մի հողատէր, նոյն իսկ աւելի մեծ կալւածքներ ունեցող քան մեր բերած օրինակն է, շատ էլ չի ընկնում մեր յիշած օգուտների յետևից, որովհետև նոցանից իւրաքանչիւրը բաւականանում է որոշ շահով, իսկ աւելին՝ նորա պէտքն էլ չէ: Իսկ Խորհուրդների իշխանութեան ժամանակ, որը լիկվիդացիայի է ենթարկում կամ ոչնչացնում է կապիտալիստական տնտեսութիւնը և դորա փոխարէն ամբողջ պետութեան մէջ կազմակերպում ստեղծում է նորը՝ հասարակականը, այդ օգուտները պէտք է խիստ աչքի առաջ ունենալ. մանաւանդ աչքի առաջ պէտք է ունենալ ժողովուրդը ամբողջութեամբ վերցրած: Ժամանակ է արդէն, որ գիւղացիներն ու բանւորները, առհասարակ Ռուսաստանի ամբողջ բնակչութիւնը ընտելանան այն մտքին, թէ պետութիւնը պէտք է մի ամբողջական տնտեսութիւն լինի: Պետութեան վրայ այդպիսի հայեացք ունենալու դէպքում պարզ կդառնայ, որ պետութիւն կուրծած տնտեսութեան մէջ որքան աւելի խուսափեն զանազան մեծածաւալ իրերի փոխադրութիւններից,

այնքան աւելի շահաւետ կլինի բոլորի համար, որով փոխադրութիւններէց խնայած ոչմը ու միջոցները կարելի կլինի գործադրել որեւէ ուրիշ գործի համար, օրինակ, արդիւնաբերութեան, հանգստի, լուսաւորութեան համար և այլն:

Ռուսաստանն արդէն ծածկւել է խորհուրդների ցանցով. նոյն կերպ պէտք է ծածկւի նաև չքաւորների կոմիտէների և գիւղատնտեսական կոմմունաների ցանցով: Դորանով միայն հնարաւոր կլինի արագութեամբ կարգի բերել գիւղերի ու քաղաքների տնտեսութիւնն և սահմանել ապրանքների կանոնաւոր փոխարինութիւն քաղաքի և գիւղի բնակիչների միջև: Դորա հետեանքը կլինի բոլոր նիւթերի և ապրանքների հաւասար բաշխումը և ապա զրամի գործադրութեան կատարեալ վերացումը, որովհետև ամբողջ պետութիւնը կզաւռայ մի տնտեսութիւն բաղմամբիւ բաժանմունքներով. իսկ մի տնտեսութեան մէջ կարելի է նաև առանց փողի կառավարել:

Այս ամենը կոմմունիստների կամ նոցա ղեկավարների հնարածը չէ, այլ «երկաթէ անհրաժեշտութիւն» է. նոյն անհրաժեշտութեան օրէնքով գիւղացիք հեռու անցեալում ստեղծել են հողի համայնական տիրապետութիւնը հողագործութեան զանազան սիստեմներով, վերաբաժանման և ապա ծխային և աղարակային տրտեսութեան սիստեմներով: Պատերազմը քայքայել է ազգերը և ստիպում է նոցա ելք ու միջոց որոնել թեթեւեղելու իրենց կեանքը, իսկ դորա համար գոյութիւն ունի միայն մի միջոց—սոցիալիզմ կամ կոմմունիզմ: Կոմմունիստներն էլ հէնց կոչ են անում քաղաքների և գիւղերի չքաւորներին, որ կոմմունաներ (հա-

մայներ) կազմեն, որովհետև դոցա միջոցով միայն կարելի է աղատել աղքատութիւնից և հարուստների ստրկութիւնից: Քաղաքներում կոմմունաների համար արդէն գոյութիւն ունին պատրաստի ձևեր, որպիսիք են, օրինակ, ֆարրիկաներ, գործարաններ, երկաթուղիներ, էլէքտրաքարշներ, շոգենաւային ընկերութիւններ և այլն. իսկ գիւղերում, բացի զրաւած կալաճքներից, համարեա ուրիշ ոչինչ չկայ, ուստի և պէտք է լինում ամեն ինչ նորից ստեղծել, հիմնաքարից սկսել: Եւ այդ հիմնաքարը կարող են լինել չքաւորների կոմիտէները: Դործը նոր է, բարդ ու դժւարին. բայց գիւղական համայնքն էլ իւր վերաբաժանումներով մի օրւայ ու մի տարւայ մէջ չի ստեղծւել: Այժմ պայմաններն անհամեմատ լաւ են, քան երբ և իցէ, որովհետև այժմ չքաւոր գիւղացիութեան օգնել կարող են՝ պոշտը, հեռագիրը, շոգենաւը, երկաթուղին, լրագիրը, սոցիալիստական կուսակցութիւնները (ոչ բոլորը) և կոմմունիստները: Հետեաբար կոմիտէների և կոմմունաների կազմակերպութեան գործը ներկայումս անհամեմատ աւելի արագ քայլերով կարող է ընթանալ, քան մի ժամանակ գիւղական համայնքի կազմութիւնը, երբ գիւղերում նոյն իսկ ճանապարհներ չեն եղել, իսկ մարդիկ մտքերովն անգամ չեն անցրել՝ թէ կարող են երբ և իցէ զրազեալ լինել:



„ՀԻՄՆԻՍՏԱՅԻՆ ԿՈՄՄՈՒՆԱՅ“-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Վատին. — Խնչ քան է կոմմունան: Գինն է 60 կ.
2. Քիյ. — Գիւղական կոմմունա: Գինն է 70 կ.
3. „ — Գիւղական համայնքից զէպի սոցիալիստական կոմմունա: Գինն է 1 ռ.

Տպագրւում է՝

1. Քիյ. — Գիւղական համայնքից զէպի սոցիալիստական կոմմունա:

Պատրաստւում են տպագրութեան համար՝

1. Կաուցիկի. — Սոցիալիզմի պատմութիւնը:
2. Բարեօփ. — Հասարակութիւն պահանջողների վարչապետութիւնը:
3. Ռոմէն-Ռոլան. — Ժողովրդական թատրոն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԵՆՊՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՍԿՒԱՅՈՒՄ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Ռուս. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
2. Ն. Լինին. — Նամակ Ամերիկեան Բանւորներին: Գինն է 1 ռ.
3. Վ. Ֆրիշէ. — Պրոլետարական պոէզիան: Գինն է 2 ռ.
4. Ներշակ. — Դէպքերը Բազում (Հայ Յեզ. Դաշնակցութիւնը և Բազւի Խորհրդային Իշխանութիւնը): Գինն է 75 կոպ.
5. Զիշերին. — Բրեստից լետոյ (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին): Գինն է 1 ռ.
6. Ն. Լինին. — Կարլ Մարքս (Համառօտ կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը): Գ. 1 ռ. 50 կ.
7. Ներշակ. — Ռուսաստանի Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան: Գինն է 1 ռ.

8. Խորհրդային Կառավարութեան նոտան Վիպրնին: Գինն է 75 կոպ.
9. Մ. Պաւլովի: (Վելյուման). — Ստիան և իր դերը Համաշխարհային պատերազմի մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վատին. — Ինչ բան է կոմմունան: Գինն է 60 կ.
2. Քիյ. — Դիւղական կոմմունա: Գինն է 70 կ.
3. — Դիւղական Համայնքից դէպի սոցիալիստական կոմմունա: Գինն է 1 ռ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0196530

